ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1720: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

Սյունյաց Երկիր

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016Թ.
№ 30 (406)
www.syuniacyerkir.am

Հանուն արժանապատիվ Կապանի

Արտուր Աթայան

ՖՈՏՈԼՈՒՐ

ԱՐՏՈՒՐ ԱԹԱՅԱՆ. «Կանեմ ամեն հնարավորը, որ կապանցին իր հայրենի քաղաքում իրեն լավ զգա, համայնքապետարանն իրենը համարի»

Հայտարարություն

Սիրելի՛ կապանցիներ
2016թ. հոկտեմբերի 2-ին կայանալու են տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրություններ: Բնականաբար Հայ հեղափոխական դաշնակցությունը չի կարող անմասն մնալ Կապանի խնդիրների լուծմանն իր մասնակցությունը բերելուց եւ քննարկելով Սյունիքի մարզկենտրոնում առկա իրողությունները՝ որոշել է.
1. Մասնակցել Կապան համայնքի ղեկավարի ընտրությանը՝ թեկնածուի կուսակցական առաջադրմամբ:
2. Հայ հեղափոխական դաշնակցության կողմից Սյունիքի մարզկենտրոն Կապան համայնքի ղեկավարի թեկնածու առաջադրել Արտուր Աթայանին:
Մեր ծրագրերը եւ անելիքներն ընտրողի դատին կներկայացնենք օրենսդրությամբ նախատեսված նախընտրական քարոզարշավի ընթացքում, իսկ մինչ այդ ակնկալում ենք, որ ընտրության կազմակերպման պատասխանատուները կկարողանան օրենքով նախատեսված կարգով ապահովել ընտրական գործընթացը:
ՀՅԴ «Արամ Մանուկյան» կոմիտեություն
29 օգոստոսի 2016թ.

Հարցազրույց ընտրությունների առիթով

Քաղաքական դաշտ վերադառնալու, Կապանում տիրող իրավիճակի եւ մի շարք խնդիրների ու ծրագրերի մասին է զրույցը Կապան համայնքի ղեկավարի թեկնածու Արտուր Աթայանի հետ:

-Պարո՛ն Աթայան, երբ 2012թ. ՏԻՄ ընտրությունների ժամանակ Ձեր թեկնածությունը հանեցիք, շատերին թվաց, թե մեծ հիասթափություն կապրեք, քաղաքական դաշտում անելիք չեք ունենա, ոմանք էլ երեւույթը որակեցին որպես Ձեր քաղաքական կարիերայի ավարտ: Բայց, ինչպես ցույց տվեց ժամանակը, չհիասթափվեցիք, նոր ուժ հավաքեցիք, չկորցրիք Ձեր ընտրազանգվածը եւ հիմա նորից առաջադրել եք Ձեր թեկնածությունը:

– 2012թ. կատարված իրադարձությունների պատճառների մասին չէի ցանկանա խոսել, բայց մի բան պետք է նշեմ. ընտրություններից անմիջապես առաջ քրեական գործ էր հարուցվել պաշտոնեական դիրքի չարաշահման մեղադրանքով, եւ ընտրական գործընթացն ավարտվելուց հետո դատավարություն տեղի ունեցավ, որի արդյունքում վճիռ կայացվեց պետական պաշտոնում աշխատելու իրավունքից, ընտրվելու իրավունքից առժամանակ ինձ զրկելու մասին, մի խոսքով՝ եթե ընտրվեի, միեւնույնն է, վճիռը կկիրառվեր: Սա էր վերջին պահին թեկնածությունս հանելու հիմնական պատճառը: Այսօր, իհարկե, շատերին է հետաքրքրում այդ հարցը: Բայց հստակ կարող եմ ասել, որ թեկնածությունս կրկին առաջադրելու պատճառներից մեկն էլ այն է, որ Կապան համայնքի ղեկավարի համար հանրապետական կուսակցությունը չի առաջադրել ավելի լավ թեկնածու եւ կրկնել է նախորդ անգամվա սխալը: Իմ կարծիքով, դա ասել եմ նաեւ հանրապետական կուսակցությունից իմ ընկերներին, այդ կուսակցության տեղական կառույցում ավելի արժանավոր թեկնածուներ կան: Այնպես որ՝ անցած չորս տարին կորցրած ժամանակ եմ համարում Կապանի համար, իսկ առաջիկա ընտրությունը՝ ուշացած: Թեկնածությունս առաջադրելու ամենակարեւոր պատճառը եւս հինգ տարի մեր քաղաքն անդեմ չտեսնելու ցանկությունս է. եթե ավելի ընդունելի թեկնածու առաջադրվեր, միգուցեեւ չառաջադրվեի: Որպես քաղաքի բնակիչ՝ ստեղծված վիճակին չեմ կարող համակերպվել, ուստի թեկնածուի այլընտրանք առաջարկեցի՝ գիտակցելով, որ կապանցի ընտրողների մեծ մասի հա-

էջ 4

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ Գ. ՍԱՀԱԿՅԱՆԻ

ԱՅՑԵՔԱՐՏ

Արտուր Աթայան. ծնվել է 1964թ. ապրիլի 6-ին Կապան քաղաքում: 1981թ. ավարտել է Կապանի N2 միջնակարգ դպրոցը: 1982-1984թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1984 թվականից աշխատանքի է անցել Կապանի «էլեկտրոն» գործարանում: 1988 թվականից ակտիվորեն մասնակցել է ազգային զարթոնքին, հետագայում ներգրավվել ՀՀ սահմանների պաշտպանության կազմակերպման, ինքնապաշտպանական ջոկատների ձեւավորման, սպառազինման ու հանդերձավորման գործին: 1991 թվականից ՀՅԴ անդամ է, նույն թվականից՝ ՀՅԴ ԿԿ գործիչն էր Սյունիքում, 1996 թվականից՝ ՀՅԴ «Լեռնահայաստան» մարզային կոմիտեի անդամ: 1995 թվականին քաղաքացիական նախաձեռնությամբ առաջադրվել է ՀՀ Ազգային ժողովի պատգամավորության թեկնածու: 2002 թվականին որպես գործարար հիմնել է «Վայբլ» ՍՊ ընկերությունը, որի տնօրենն էր մինչեւ 2008թ. նոյեմբեր ամիսը: 2008թ. հոկտեմբերի 12-ին ընտրվել է Կապանի քաղաքապետ. առաջադրվել էր քաղաքացիական նախաձեռնությամբ: 2012-16թթ. վերստին եղել է «Վայբլ» ՍՊ ընկերության տնօրեն:

Ակտիվորեն զբաղվել է հասարակական գործունեությամբ, բազմաթիվ բարեգործությունների հեղինակ է, մասնավորապես սոցիալական ու մշակութային ոլորտներում: «Սյունյաց տուն» ազգային-մշակութային ընկերության հիմնադիր անդամ է: ՀՀ առեւտրաարդյունաբերական պալատի խորհրդի անդամ է, եղել է պալատի Սյունիքի մասնաճյուղի խորհրդի նախագահ: Համագործակցել է միջազգային կազմակերպությունների հետ:

2002 թվականից նախաձեռնել ու նպաստել է «Կապան-Գլենդել քույր քաղաքների ընկերակցության» հիմնադրմանը:

2008թ. նոյեմբերի 11-ին ընտրվել է «Կապան» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ:

Ունի ֆինանսիստ-տնտեսագետի բարձրագույն կրթություն (2006թ. ավարտել է Երեւանի կիրառական բիոտեխնոլոգիայի ինստիտուտի տնտեսագիտության ֆակուլտետը):

Ամուսնացած է, ունի երկու որդի, մեկ դուստր, չորս թոռ:

ԽՈՍՔ ԸՆՏՐՈՂԻՆ

Սիրելի՛ կապանցի

2016թ. հոկտեմբերի 2-ի ընտրություններում առաջադրել եմ թեկնածությունս Կապանի համայնքի ղեկավարի հերթական ընտրությանը մասնակցելու համար, ինչի առիթով ուզում եմ ձեզ ներկայացնել խոհերս:

Ինչո՞ւ նման որոշում ընդունեցի, ի՞նչ մղումներ են ընկած պատասխանատու այդ քայլի հիմքում:

Դրա համար, առաջին հերթին, թույլ տվեք ասել, ունեմ բարոյական լիարժեք ու չխաթարված իրավունք. 2008-12թթ. արժանապատվորեն եմ կատարել քաղաքապետի պարտականություններս, նախընտրական խոստումներս, ապահովել համայնքի քառամյա զարգացման ծրագրի կատարումը, անկեղծ ու ազնիվ եմ եղել իմ քաղաքի, իմ ընտրողների հանդեպ, չեմ չարաշահել մարդկանց վստահությունը, բարձր եմ պահել տեղական ինքնակառավարման մարմնի պատիվը եւ կապանցու արժանապատվությունը, համայնքում (նաեւ քաղաքապետարանի ակտիվ դերակատարությամբ) ապահովվել է համերաշխության, հանդուրժողականության մթնոլորտ, քաղաքապետարանը չի հայտնվել աղմկահարույց որեւէ պատմության մեջ, պետական շահը, համայնքի շահը, մարդկանց իրավունքները մշտապես եղել են տեղական իշխանության գործունեության առանցքում:

Սկզբունքային նշանակություն եմ տվել ու տալիս համայնքի բնակչության մեջ իշխող տրամադրություններին, քաղաքացիների դիրքորոշմանը: Իսկ հազարավոր կապանցիներ անկեղծորեն հավանություն են տվել ու տալիս իմ գործունեությանը, գործելակերպին, կրկին ու նորից սատարելու պատրաստակամություն հայտնում, վերստին ընտրվելու պահանջ ներկայացնում: Եվ դա կապանցի ընտրողի մի ստվար մասի հստակ, որեւէ պայմանականությամբ չպարուրված դիրքորոշումն է:

Այնուհետեւ, թող անհամեստ չհնչի, իմ մեջ տեսնում եմ որոշակի ուժ եւ կամք, որոնք թույլ կտան առաջիկա ընտրաշրջանում արդյունավետ ղեկավարել Կապան համայնքը: Ու տարիների փորձս, գիտելիքներս, քաղաքի հիմնախնդիրների լուծման վերաբերյալ հստակ պատկերացումներս կծառայեցնեմ գործին:

Լինելով ՀՅԴ անդամ՝ ես, այնուամենայնիվ, դրսեւորել եմ ու կդրսեւորեմ վերկուսակցական պահվածք, քանի որ առաջնորդվում եմ համայնքի ընդհանրական շահով, քանի որ համայնքապետարանը, ինչպես նշել եմ բազմիցս, յուրաքանչյուրիդ հավատի եւ վստահության դուռն է, յուրաքանչյուրիդ հուսատեղին: Համայնքի ամեն մի բնակչի համարել եմ իմ դաշնակիցն ու գործընկերը՝ անկախ իմ հանդեպ նրանց ունեցած վերաբերմունքից: Միշտ ձգտել եմ նեցուկ լինել յուրաքանչյուրին, հասանելի լինել ամենքին, որեւէ մեկին երբեք ցավ չպատճառել: Ձգտել եմ համայնքին տալ ունեցածս: Քննադատությանը չարությամբ չեմ վերաբերվել, ամեն մի դիտողությունից փորձել եմ դասեր քաղել: Մարդկանց դրական ձեռնարկումներին, եթե նույնիսկ չեմ կարողացել նպաստել, ապա չեմ էլ խոչընդոտել: Երբեք չեմ խուսափել ժամանակի սուր հարցերից ու պատասխանատվությունից: Ամեն գնով ձգտել եմ խոսքս գործ դարձնել, իսկ եթե ինչ-որ բան չի ստացվել, ապա դա հաջորդ օրվա անելիքներիս մեջ եմ թողել:

Արդեն ապացուցել եմ, որ ի վիճակի եմ ապահովել համայնքապետի, նրա աշխատակազմի արդյունավետ համագործակցությունը ե՛ւ կառավարության ու մարզպետարանի, ե՛ւ քաղաքական ու հասարակական կազմակերպությունների, ե՛ւ տնտեսվարող սուբյեկտների ու գործարար աշխարհի, նաեւ մայրաքաղաքում ու արտերկրում բնակվող կապանցիների հետ: Այդ ամենը, համոզված եմ, Կապանի առջեւ ծառացած խնդիրները լուծելու հավելյալ գործոն է:

Այնպես որ՝ գալիս եմ աշխատելու վճռականությամբ, իմ գիտելիքները, կարողություններն ու փորձը Կապանին ծառայեցնելու մտադրությամբ, հանուն քաղաքի բարգավաճման ու Կապանի առջեւ ծառացած խնդիրների լուծման: Ես գալիս եմ ամեն մի կապանցու մեջ արթնացնելու պատասխանատվության զգացում, տիրոջ զգացում հայրենի բնօրրանի՝ Կապանի հանդեպ:

Ընդհանրապես մեծագույն հարգանքով եմ վերաբերվում պետական բոլոր կառույցների, բոլոր պաշտոնյաների կարծիքներին ու դիրքորոշմանը, բայց անթույլատրելի ու անբնական եմ համարում նրանց միջամտությունը Կապանի համայնքապետի ընտրությանը, ինչի առանձին դրսեւորումների արդեն իսկ ականատես ենք: Նման երեւույթը մեծագույն վիրավորանք է կապանցուն, Կապանի արժանապատվությանը: Մինչդեռ Կապանի քաղաքապետը ոչ մի պարագայում չպետք է դրածո լինի եւ պետք է ընտրվի բացառապես կապանցիների կամքով: Եվ հոկտեմբերի 2-ը քննության օր է լինելու հազարամյակների խորքից եկող Կապանի եւ բոլոր այն կապանցիների համար, ում համար թանկ է մեր բնօրրանի արժանապատվությունը:

> *Իմ հույսը կապում եմ կապանցի ընտրողի հետ: Ինչպես 2008-ին եւ 2012-ին՝ ընտրության եմ գնում կապանցիների հետ՝ հանուն արժանապատիվ Կապանի: Ինչպես 2008-ին՝ ուզում եմ ընտրվել եւ ոչ թե նշանակվել:*

Սիրելի՛ հայրենակից

Վերը շարադրված հանգամանքները հաշվի առնելով է, որ կրկին ծառայությունս եմ առաջարկում ձեզ ու յուրաքանչյուրիդ վստահությունն ու աջակցությունն ակնկալում:

Վստահեք, եւ կարդարացնեմ ձեր հույսերը: Հավատացեք, որ կկարողանամ Կապանն առաջիկա հինգ տարում առաջնորդել զարգացման ճանապարհով, ձեզ համար հուսալի եւ ցանկալի ուղիով: Իսկ վստահելու օրը հոկտեմբերի 2-ն է:

Հարգանքով՝

ԱՐՏՈՒՐ ԱԹԱՅԱՆ

Կապան համայնքի ղեկավարի թեկնածու Արտուր Աթայանի նախընտրական ծրագիր

ՖՈՏՈԼՈՒՐ

ԱՐՏՈՒՐ ԱԹԱՅԱՆ
Կապան համայնքի ղեկավարի թեկնածու

Կապանն ապրում է իր պատմության ամենավճռական փուլերից մեկը, ինչը պայմանավորված է համայնքի առջեւ ծառացած հիմնախնդիրներով ու համայնքին նետված մարտահրավերներով: Այդ մարտահրավերներին դիմագրավելու, ծառացած խնդիրները լուծելու գործում մեծագույն եւ անփոխարինելի դերը պատկանում է համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին եւ մասնավորապես համայնքի ղեկավարին, ինչի համար եւ կարեւորում ենք հոկտեմբերի 2-ի ընտրությունների ազատ եւ արդար անցկացումը: Եվ որպեսզի համայնքի ղեկավարն ապագայում կարողանա կատարել իր առաքելությունն ու կարողանա առաջնորդել համայնքի բնակչությանը, ապա պետք է ընտրված լինի համայնքի ընտրողների կողմից՝ առանց այլեւայլ միջամտության: Միայն այդպիսի ճանապարհով, բնակչության ազատ կամարտահայտությամբ ընտրված համայնքապետը կարող է օժտված լինել քաղաքական ու բարոյական անհրաժեշտ ռեսուրսով:

Կապանում այսօր առկա են լուծման ենթակա բազմաթիվ խնդիրներ, Կապանին սպառնում են մի շարք մարտահրավերներ: Անկեղծ չէր լինի, եթե ասեինք, որ առաջիկա հինգ տարում դրանք կլուծենք ամբողջապես: Այդ խնդիրների, մարտահրավերների կողքին կան նաեւ այլ իրողություններ. Կապանը հարավարեւելյան Հայաստանի ամենախոշոր քաղաքն է, տարածաշրջանային կենտրոն է եւ հաղորդակցության ուղիների հանգույց, Կապանը երկրի հանքարդյունաբերության մայրաքաղաքն է եւ, ի վերջո, ռազմավարական անզուգական հանգրվան Հայաստանի հարավում:

Այդ ամենը հաշվի առնելով՝ կամենում ենք առանձնացնել առաջնահերթությունները, որոնք առաջիկա հինգ տարում կգտնվեն համայնքային իշխանության ուշադրության կենտրոնում:

- Անկախ քաղաքական հայացքներից համայնքի բնակիչներն ունեն առնվազն մեկ միավորող առանցք՝ մեր սիրելի Կապանը, նրա ընդհանրական շահը, ուստի պետք է ստեղծել համերաշխության, հանդուրժողականության, փոխադարձ հարգանքի մթնոլորտ:
- Աջակցել քաղաքացիական հասարակության հետագա ձեւավորմանը, ապահովել համայնքի բնակիչների շահերի պաշտպանությունը, քաղաքապետարանի գործունեության եւ քաղաքին առնչվող հարցերի լուծման ուղղությամբ կատարվող աշխատանքների հրապարակայնություն եւ թափանցիկություն, բացախոսության եւ բազմակարծության մթնոլորտ:
- Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության գլխավոր երաշխիքներից մեկը համայնքի բնակիչների հավատն ու վստահությունն է համայնքապետի ու համայնքապետարանի հանդեպ: Ելնելով դրանից՝ հնարավորինս ակտիվացնել համայնքի անդամների մասնակցությունը ՏԻՄ-ին առնչվող հարցերի եւ առհասարակ համայնքային խնդիրների քննարկմանն ու լուծմանը: Համայնքին առնչվող առավել կարեւոր հարցերի շուրջ կազմակերպել հանրային քննարկումներ: Ստեղծել հավելյալ պայմաններ քաղաքական ուժերի, հասարակական կազմակերպությունների տեղական կառույցների անկաշկանդ գործունեության համար, նրանց ներկայացուցիչների հետ պարբերաբար կազմակերպել հանդիպումներ՝ համաքաղաքային խնդիրների քննարկման նպատակով:
- Ապահովել համայնքային բյուջեի հետագա դինամիկ աճը եւ սեփական մուտքերի հավաքումը մշտապես հասցնել 100%-ի: Համայնքային բյուջեի եկամտային մասի սեփական մուտքերի ծավալների աճն ապահովելու նպատակով ավելի արդյունավետ օգտագործել համայնքի հնարավորությունները: Քաղաքի առջեւ ծառացած խնդիրները լուծելու համար հայթայթել ֆինանսավորման հավելյալ աղբյուրներ:
- Համապատասխան գերատեսչությունների քննարկման առարկա դարձնել համայնքի՝ ժամանակակից պահանջներին համահունչ աղբավայրի կառուցման հարցը: Համակարգված ձեւով աղբահանություն իրականացնել նաեւ քաղաքի թաղամասերից: Ինչպես նաեւ քայլեր ձեռնարկել քաղաքում կեղտաջրերի մաքրման կայան կառուցելու ուղղությամբ:
- Մշակել երիտասարդական քաղաքականության նոր հայեցակարգ: Երիտասարդության ռազմահայրենասիրական ու ֆիզիկական դաստիարակություն, զբաղվածության խնդրի կարգավորում, ազատ ժամանցի եւ հանգստի խելամիտ կազմակերպում, երիտասարդ ընտանիքների հիմնախնդիրների լուծում, մոր եւ մանկան առողջության պահպանման ոլորտում բարենպաստ պայմանների ստեղծում, տաղանդավոր դպրոցականների եւ ուսանողների կրթության հովանավորում, մարզական ոլորտի հետագա զարգացում, մայրաքաղաք եւ արտերկիր ուսման մեկնած պատանիների եւ աղջիկների ճակատագրի հանդեպ հետաքրքրության ցուցաբերում…
- ՀՀ գյուղնախարարության համապատասխան ստորաբաժանման եւ պետական մյուս կառույցների հետ համատեղ ուշադրության կենտրոնում պահել սննդի անվտանգության ոլորտում եւ առաջին անհրաժեշտության ապրանքների ու հատկապես սննդի, առավելապես՝ հացի շուկայում տիրող վիճակը, ժամանակ առ ժամանակ արձագանքել զարգացումներին եւ դրանցից բխող քայլեր ձեռնարկել:
- Կապանում ժողովրդագրական դրության բարելավման եւ բնապահպանական ոլորտին սպառնացող մարտահրավերներին դիմագրավելու վերաբերյալ մշակել առաջնահերթ միջոցառումների ծրագիր եւ ներկայացնել ՀՀ կառավարությանը՝ նկատի ունենալով, որ այդ հարցերը համայնքի ուժերով հնարավոր չէ լուծել, որ դրանք կարելի է լուծել միայն հանրապետական գերատեսչությունների ու նախարարությունների միջոցով:
- Առավել ակտիվացնել քաղաքի հոգեւոր-մշակութային հաստատությունների գործունեությունը՝ աջակցելով նրանց նյութատեխնիկական բազայի արդիականացմանը, մասնագետ կադրերով ապահովմանը:
- Պաշտպանել տնտեսվարող սուբյեկտների օրինական շահերը, նպաստել տնտեսության մեջ առաջընթացի ապահովմանը: Խրախուսել փոքր եւ միջին բիզնեսի ոլորտում յուրաքանչյուր դրական նախաձեռնություն եւ ցույց տալ համապատասխան աջակցություն: Տնտեսության մեջ իբրեւ գլխավոր առաջնայնություն համարել նոր աշխատատեղերի ստեղծումը: Քաղաքում ներդրումների համար ստեղծել բարենպաստ ու գրավիչ պայմաններ, քաջալերել ներդրումները:

Գործընկերային առանձնահատուկ հարաբերություններ պահպանել «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» եւ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերությունների հետ՝ հաշվի առնելով նրանց բացառիկ դերը համայնքի սոցիալ-տնտեսական եւ հոգեւոր-մշակութային կյանքում:

- Այսուհետ եւս հետամուտ լինել զոհված ու վիրավոր ազատամարտիկների ընտանիքների սոցիալական պայմանների բարելավմանը: Ուշադրության կենտրոնում պահել քաղաքում տեղակայված բանակային ստորաբաժանումների, նրանցում ընդգրկված սպայական անձնակազմի ընտանիքների սոցիալական, հոգեւոր-մշակութային հոգսերը:
- Կրթական համակարգի (մանկապարտեզներ, արվեստի եւ գեղարվեստի դպրոցներ, մարզադպրոցներ, հանրակրթական դպրոցներ, միջին մասնագիտական եւ բուհական հաստատություններ) կազմակերպությունների հիմնախնդիրները պահել ուշադրության կենտրոնում, աջակցել դրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը: Նոր մանկապարտեզների հիմնադրմամբ կամ եղածների ընդլայնմամբ ստեղծել պայմաններ, որ համայնքի նախակրթական տարիքի բոլոր երեխաները մանկապարտեզում ընդգրկվելու հնարավորություն ունենան:
- Գործող օրենքների սահմաններում ուժեղացնել հանրային հսկողությունն իրավապահ մարմինների գործունեության հանդեպ: Հասարակական կարգի եւ առհասարակ իրավակարգի ամրապնդման նպատակով համագործակցել դրանում շահագրգիռ բոլոր կազմակերպությունների հետ:
- Շարունակել միջազգային կառույցների տեղական գրասենյակների հետ համագործակցությունը, հետամուտ լինել գործող ծրագրերի մինչեւ վերջ եւ որակյալ կատարմանը: Քույր քաղաքների հետ համագործակցությունը համարել քաղաքապետարանի գործունեության առաջնայնություններից մեկը:
- Բազմաբնակարան շենքերի կառավարումը, ինչպեսեւ դրանց պահպանումն ու սպասարկումը համարել առաջնահերթ խնդիր: Ուշադրության կենտրոնում պահել դրանց տանիքների, ինչպես եւ ջրահեռացման ու ջրամատակարարման համակարգերի նորոգումը, քաղաքային ենթակառույցների պահպանումն ու զարգացումը: Աշխատանքային նոր ձեւերով բարձրացնել համատիրությունների գործունեության արդյունավետությունը: Շարունակել խաղահրապարակների ցանցի ընդլայնման՝ նախկինում սկիզբ առած քաղաքականությունը:

* * *

Առաջարկվող հիմնադրույթները, բնականաբար, չեն կարող վերջնական համարվել: Նախընտրական քարոզարշավի այս օրերին հանդիպում ենք համայնքի բնակիչների, հասարակության գրեթե բոլոր խավերի ներկայացուցիչների հետ: Այդ հանդիպումների ընթացքում ստանում ենք բազմաբնույթ առաջարկություններ, դիտողություններ, ոմանք միանգամայն այլ կերպ են պատկերացնում համայնքի հիմնախնդիրների լուծումը, ընթացիկ քաղաքականության առաջնահերթությունները: Բոլոր այդ նկատառումները հաշվի կառնենք եւ վերջնականապես (քարոզարշավի ավարտից հետո) կխմբագրենք հանրությանը ներկայացվող սույն փաստաթուղթը, ինչը ժամանակին հիմք կծառայի Կապանի հնգամյա զարգացման ծրագրի ու համայնքային բյուջեի (ըստ տարիների) նախագծերի մշակման համար: ■

Հարցազրույց ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ առիթով

ԱՐՏՈՒՐ ԱԹԱՅԱՆ. «Կանեմ ամեն հնարավորը, որ կապանցին իր հայրենի քաղաքում իրեն լավ զգա, համայնքապետարանն իրենը համարի»

էջ 1

մար ցանկալի, պահանջված եւ սպասված եմ: Այդ պաշտոնում ունենալով մեծ փորձ՝ վստահ կարող եմ ասել, որ անցած չորս տարվա ընթացքում Կապանում էական ոչինչ չի կատարվել, այլ հակառակը՝ ինչ-որ առումով նաեւ հետընթաց ենք ապրել՝ հատկապես ներդրումների առումով չկարողանալով գրավիչ դարձնել համայնքը: Էլ չեմ խոսում քաղաքի սոցիալ-տնտեսական, հոգեւոր-մշակութային եւ մի շարք այլ խնդիրների մասին:

– Թե՛ հանրապետական մամուլում, թե՛ հասարակության շրջանում հաճախ է շրջանառվում այն խոսակցությունը, որ 2012թ. նախադեպը Կապանում կարող է կրկնվել 2016-ին:

– 2012թ. ընտրողները չէին կասկածում իմ քաղաքապետ ընտրվելու հավանականությանը՝ նույնիսկ իշխանական հզոր լծակների օգտագործման դեպքում, բայց այն ժամանակ պատճառներն այնքան զորավոր են եղել (պատճառներից գլխավորը նշեցի), որ հրաժարվել եմ հետագա պայքարից: Այս անգամ առաջադրվում եմ Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության որոշումով եւ իմ հաստատակամության երաշխիքը, նախեւառաջ, իմ կուսակցությունն է, նրա դիրքորոշումը, ինչպես նաեւ վճռականությունս: Մինչեւ վերջ կպայքարեմ: Այսօր ես մենակ չեմ, կա թիմ, որի առաջին պահանջն է՝ ոչ մի պարագայում թեկնածությունս չհանել:

– Մինչեւ կուսակցության գերագույն մարմինը Ձեր թեկնածության հետ կապված վերջնական որոշում ընդունեց, ՀՅԴ-ի շրջանակներում այլ թեկնածուների անուններ էին շրջանառվում: Արդյո՞ք դա նշանակում է, որ կուսակցության կապանյան կառույցում հավակնություններ ունեցող եւ Ձեր թեկնածությունը չպաշտպանող ուրիշ մարդիկ էլ կային:

– Մինչեւ վերջնական որոշում կայացնելը տեղի է ունեցել ներկուսակցական ընտրարշավ, հավանական թեկնածուներն առաջարկել են իրենց ծրագրերը, եւ միայն համապատասխան ուսումնասիրությունը, թեկնածուների ընտրվելու հնարավորությունը հաշվի առնելով՝ մյուս երկու թեկնածուն հօգուտ Արտուր Աթայանի հրաժարվել են իրենց մտադրությունից: Միայն ու միայն ներկուսակցական խնդիր է եղել դա, մենք ընկերներ ենք, ու անձնական որեւէ խնդիր մեր միջեւ չկա:

– Անկախ դիրքից եւ կուսակցականությունից՝ Դուք անմիջական անձնավորություն եք, վերկուսակցական պահվածք ունեցող մարդ, ով, նախեւառաջ, ՀՀ քաղաքացի է: 2012թ. դեպքերից հետո մարզային իշխանությունների հետ կոնֆլիկտներ չեք առաջացրել, վիրավորվածի կեցվածք չեք ընդունել, այլ հակառակը՝ հանգիստ զբաղվել եք Ձեր գործերով: Համոզված ենք՝ ընտրվելու դեպքում իշխող կուսակցության ներկայացուցիչների հետ կպահպանեք նորմալ, գործնական հարաբերությունները: Բայց մի հանգամանք պիտի արձանագրենք. այսօր հանրապետության, մարզի իշխանություններին հայհոյողները (եւ ոչ թե քննադատողները), կարծեք, Արտուր Աթայանի շրջապատից են. արդյո՞ք դա հետագայում իշխանությունների հետ կոնֆլիկտներ ունենալու, միմյանց չհասկանալու ավելորդ առիթ չի հանդիսանա:

– Երբ մեկ ամիս առաջ մեր կոմիտեությանը ներկայացրի նախընտրական ծրագիրս, առաջին պայմաններիցս մեկն այն էր, որ ընտրվելու դեպքում կլինեմ բոլոր կապանցիների քաղաքապետը եւ ամեն ինչ կանեմ հանուն կապանցիների բարօրության: Ինձ համար նշանակություն չի ունենա մարդու կուսակցական պատկանելությունը. սա օրինաչափ են համարում նաեւ կուսակցական ընկերներս: Մարզային իշխանությունների հետ մշտապես ունեցել եմ կառուցողական հարաբերություններ՝ ամեն կերպ ձգտելով օգտակար լինել թե՛ քաղաքին, թե՛ մարզին առհասարակ:

> *Ինչ վերաբերում է իմ շրջապատի որոշ մարդկանց պահվածքին, խոսքերին՝ ես որեւէ առնչություն չունեմ այդ ամենի հետ: Եթե որեւիցե մեկին ասելիք եմ ունենում, դա անում եմ առերես եւ անում եմ կոռեկտ ու քաղաքակիրթ: Վերջին չորս տարիներին ձգտել եմ հնարավորինս հեռու մնալ լրատվամիջոցներից, ամենատարբեր կոնֆլիկտներից ու քաղաքական այլեւայլ գործընթացներից. իմ ոճը չէ մարդկանց թիկունքից հարվածելը: Իսկ շրջապատի մարդկանց նմանօրինակ գործողությունները մշտապես փորձում եմ չափավորել…*

– Հայ հանրության մեջ ընտրությունները կեղծելու մտավախություն կա՝ չնայած վերջին տարիներին Կապանը թե՛ ՏԻՄ, թե՛ համապետական ընտրություններին կարողացել է պահել իր սեփական դեմքը, կարողացել է տեր կանգնել իր քվեին: Այնուհանդերձ, ի՞նչ երաշխիք ունի ընտրողը, որ առաջիկա ընտրություններում արդարացիություն, թափանցիկություն, օրինականություն կապահովվի:

– Այս ոլորտում նորելուկ չեմ եւ ընտրական գործընթացներին ակտիվ մասնակցում եմ դեռեւս 2000 թվականից: Հանձնաժողովներում կուսակցական ընկերներիս, համակիրներիս մեծ ընդգրկվածությունն է, նախեւառաջ, իմ երաշխիքը: Հավաստիացնում եմ, ինչպես նախկինում, այս անգամ եւս տեր ենք կանգնելու մեր ձայներին: Երաշխավորում եմ, որ կլինի արդար քվեարկություն եւ ոչ մի ապօրինի գործողություն: Հոկտեմբերի 2-ին կունենանք ընտրածայների հստակ պատկեր, ժողովրդի կամարտահայտությամբ ձեւավորված ուժերի պարզորոշ դասավորվածություն: Ուրիշ կերպ չեմ պատկերացնում հոկտեմբերի 2-ի ընտրությունները:

– Մարզկենտրոնի առաջ բազում խնդիրներ կան, բայց որո՞նք են Ձեզ առավել մտահոգող խնդիրները, որ ընտրվելուց հետո կլինեն համայնքապետարանի ուշադրության կենտրոնում:

– Կապանի բոլոր հիմնախնդիրներին մանրամասն ծանոթ եմ՝ թաղամաս առ թաղամաս, շենք առ շենք, բայց, իմ կարծիքով, այստեղ ամենաառաջնային խնդիրը մարդկանց զբաղվածության ապահովումն է, որ շատ եմ կարեւորում հատկապես երիտասարդների համար: Այսօր Կապանը մեկ այլ կարգի կորուստ է ապրում, այն է՝ լավագույն երիտասարդները մայրաքաղաքում սովորելուց հետո կա՛մ չեն վերադառնում հայրենի քաղաք, կա՛մ տեղում համապատասխան աշխատանք չգտնելով՝ լքում են այն: Եթե այս տեմպերով շարունակվի, մեր ապագան լրջորեն կվտանգվի: Պետք է ամեն ինչ անենք երիտասարդների զբաղվածության հարցը լուծելու համար: Երկրորդ խնդիրը ներդրումների համար գրավիչ միջավայր ստեղծելն է: Գործարարները պետք է շահույթ ստանալու երաշխիք ունենան: Մյուս բոլոր խնդիրները սոցիալական բնույթի են. ներհամայնքային ճանապարհների, բակերի, մայթերի բարեկարգում, տանիքների նորոգում, խաղահրապարակների ավելացում եւ այլն: Կարեւոր է նաեւ քաղաքի հոգեւոր-մշակութային կյանքի աշխուժացումը, ինչի կարիքը, հավատացնում եմ, բոլորս ունենք:

– Իսկ ի՞նչ կասեք քաղաքի բնապահպանական ոլորտում տիրող վիճակի վերաբերյալ:

– Բավականաչափ աշխատանքներ պետք է կատարվեն: Բնական է, որ հանքարդյունաբերական ձեռնարկությունների գործունեությունը հնարավոր է դադարեցնել, բայց այդ ընկերությունները կարող են նվազագույնի հասցնել վնասակար հետեւանքները: Չպետք է թույլ տանք, որ մտածեն, թե քաղաքն անտեր է, եւ ինչ ցանկանան, այն էլ կարող են անել: Ժողովուրդն ուզում է առողջ ապրել, եւ հանքարդյունաբերական ընկերությունները պարտավոր են իրենց շահույթի հաշվին առողջապահական, հանգստի եւ այլ հարցեր լուծել, որ հնարավորինս քիչ տուժենք: Այդ ընկերությունները ներդրումներ պետք է կատարեն առողջ միջավայրի պահպանման ուղղությամբ:

– Ինչպե՞ս եք վերաբերվում համայնքների խոշորացմանը կամ միավորմանը, որ հիմա ընթանում է հանրապետությունում, ինչպես եւ մեր մարզում:

– Ճիշտն ասած, համայնքների խոշորացմանը կամ միավորմանը համաձայն չեմ: Յուրաքանչյուր համայնք, անկախ նրանից՝ մե՞ծ է, թե՞ փոքր, ինքնակառավարման իրավունք ունի: Ֆինանսական տնտեսումների համար չպետք է գնալ համայնքների խոշորացման ճանապարհով, քանի որ դա լրացուցիչ խնդիրներ կստեղծի խոշորացվող համայնքի բնակչի համար: Իմ կարծիքով՝ այդ քայլը չի կարող նպաստել գյուղերի պահպանմանը, առավել եւս՝ զարգացմանը:

– Ի՞նչ դասեր կարելի է քաղել ապրիլյան քառօրյա պատերազմից եւ ոստիկանության ՊՊՇ գնդի շուրջ հուլիսին տեղի ունեցած միջադեպից:

– Ցավալիորեն պետք է արձանագրեմ, որ մենք պատրաստ չէինք ապրիլյան պատերազմին, եւ հակառակորդի հանկարծակի հարձակումը, իմ կարծիքով, անակնկալի բերեց, եւ թշնամու՝ որոշ տարածքներ մտնելը չպետք է տեղի ունենար: Այդ օրերին ինձ հիացրեց եւ հպարտություն պատճառեց մեր ժողովրդի միասնականությունը, որ, անկախ ամեն ինչից, նետվեց մարտի դաշտ: Իմ կարծիքով՝ ժողովուրդը սրանով վերջին անգամ զգուշացրեց իշխանությանը՝ ուժեղացնել եւ արդիականացնել բանակը, պաշտպանել ու ամրացնել սահմանները: Մեր ազգը ցույց տվեց, որ հատկապես բանակաշինության առումով մշտապես պատրաստ է աջակցել պետությանը: Իսկ մեր իշխանություններին օրեր պահանջվեց սթափվելու եւ արթնանալու համար:

Հուլիսյան դեպքերի վերաբերյալ կարող եմ ասել, որ ցավալի է, երբ մեր երկրում նմանատիպ իրադարձություններ են կատարվում, ինչի արդյունքում նույնիսկ մարդիկ են զոհվում: Բայց սա բողոքի վերջին ճիչն էր. ստացվում է՝ մարդիկ ամեն ինչ փորձել էին, եւ արդեն օրինական ճանապարհով ինչ-որ բանի հասնել հնարավոր չէր: Իհարկե, սխալ քայլ է զենքի ուժին դիմելը, բայց նաեւ մեր ղեկավարությունը պետք է այնպիսի պայմաններ ստեղծի, որ մարդիկ, այլ ելք չտեսնելով, ծայրահեղ քայլերի չդիմեն: Միանշանակ որեւէ կողմին մեղադրելն արդարացի չէ. երկու կողմն էլ մեղավորության իրենց չափն ունեն, պարզապես կարելի էր եւ խուսափել այդ միջադեպից:

– Ձեր դիրքորոշումը ՀՀ նոր սահմանադրության վերաբերյալ:

– ՀՀ նոր սահմանադրությանը քվեարկել եմ այո, ինչն իմ կուսակցության որոշումն է եղել: Անձամբ այնքան էլ համաձայն չեմ դրան: Իմ կարծիքով, պատերազմի վտանգի առաջ կանգնած պետությունը պետք է ուժեղ նախագահական կառավարում ունենա եւ ոչ թե խորհրդարանական:

– Ավագանու ինստիտուտի նկատմամբ, կարծեք, երիտասարդների հետաքրքրությունը մեծացել է: Սա է վկայում հատկապես Կապանում ավագանու 15 անդամի համար 31 թեկնածու ունենալը:

– Այդ ակտիվությունն ինձ ոգեւորում է, ուրախ եմ, որ երիտասարդները ձգտում են մասնակցություն ունենալ համայնքի կառավարման գործընթացին: Անձամբ որեւէ մեկի թեկնածությունը չեմ պաշտպանում, ամեն ինչ թողնենք ընտրողների հայեցողությանը: Պատրաստ եմ աշխատել ժողովրդի կողմից ընտրված ավագանու հետ:

– Համայնքային ենթակայության տակ գործում են համատիրություններ, որոնք չեն արդարացնում բնակիչների սպասելիքները: Եվ անվստահությունից դրդված՝ մարդիկ հրաժարվում են վճարում կատարել՝ բավարարվելով միայն, անհրաժեշտության դեպքում, տեղեկանքի համար գումար տալով:

– Համատիրությունը զարգացած երկրներում լուրջ կառույց է համարվում, իսկ մեզանում ֆինանսական ներարկումների բացակայության պայմաններում գրեթե անիմաստ է դառնում նրա գոյությունը: Բնակիչներից գանձվող գումարը հազիվ բավականացնում է հիմնարկի գոյության պահպանմանը: Իմ կարծիքով՝ ճիշտը մեկ ընդհանուր՝ համայնքային ոչ առեւտրային կառույց ստեղծելն է՝ իր համապատասխան ծառայություններով, կենտրոնացված վճարումներով: Մեկ կառույցի դեպքում համայնքն էլ ներդրում կկատարի՝ բնակչության որոշակի խնդիրները լուծելու համար. թե չէ այս կարգավիճակով եւ նման գործելակերպով դրանք մեռնող կառույցներ են:

– Բարգավաճ Հայաստան կուսակցության թեկնածու Արթուր Մարտիրոսյանի նկատմամբ Ձեր դիրքորոշումը:

– Անձամբ ճանաչում եմ Արթուր Մարտիրոսյանին, նորմալ հարաբերություններ ունենք: Նա ինքնառաջադրվել է, բայց Բարգավաճ Հայաստան կուսակցության անդամ է: Միգուցե եւ կուսակցությունն այս առաջադրմամբ փորձում է պարզել 2017թ. Աժ ընտրությունների ժամանակ իրեն տրվելիք ձայների մոտավոր քանակը: Չնայած համոզված եմ՝ Աժ գալիք ընտրություններում այդ կուսակցությունը մեր տարածաշրջանից չի կարողանա հավաքել այնքան ձայն, ինչ հավաքեց Աժ վերջին ընտրությունների ժամանակ: Այնպես որ Արթուր Մարտիրոսյանի առաջադրմամբ որեւէ խնդիր՝ ուժերի հարաբերակցության փոփոխման առումով, չեմ տեսնում:

– Ընտրությունից ընտրություն խոսակցություններ են շրջանառվում, որ ընտրված ղեկավարն իր հետ կբերի նոր աշխատակազմ, նախորդ ղեկավարի կառավարման ընթացքում աշխատանքի ընդունված մարդկանց կհեռացնի եւ այլն, ինչը բազմաթիվ մարդկանց անհանգստություն է պատճառում:

– Երբ 2008թ. ընտրվել եմ համայնքի ղեկավար, կադրային այդպիսի խնդիր չեմ դրել, բացի նրանից, որ նշանակել եմ նոր տեղակալ, աշխատակազմի ղեկավար, մամլո քարտուղար, այսինքն՝ փոխել եմ

Դարգարույց բնտրությունների սահմանով

միայն ինձ հետ անմիջապես աշխատող մարդկանց: Մշտապես հայտարարել եմ՝ ով իմ աշխատանքային տեմպին համընթաց քայլի, կշարունակի իր աշխատանքը: Չորս տարվա պաշտոնավարման ընթացքում մարդկանց աշխատանքից չեմ հեռացրել, հակառակը՝ աշխատատեղեր եմ ավելացրել: Իմ գործելակերպին ծանոթ մարդիկ գիտեն, որ ընտրվելու դեպքում ոչ մեկն աշխատանքից չի հեռացվի: Իր մասնագիտությանը լավագույնս տիրապետող անձը չպետք է վախենա իր աշխատատեղի կորստից, ինձ համար բնավ նշանակություն չունի, թե իրենց վստահության քվեն ում են տվել:

– Հեռո՞ւ է այն ժամանակը, երբ ընտրությունից հետո մարդիկ իրար կժպտան, հակառակորդ չեն դառնա միմյանց, թշնամիների փնտրտուք չի լինի:

– Իմ ընտրվելու դեպքում, կարծում եմ, Կապանին հենց նման խաղաղ իրավիճակ է սպասվում:

– Առհասարակ ինչպե՞ս եք վերաբերվում քննադատությանը, բացախոսությանը, թափանցիկ գործելակերպին:

– Ոչ մի անգամ չեմ խուսափել առողջ քննադատությունից, հակառակը, այն մեծ օգուտ է բերել ինձ: Եթե ի վիճակի ես տեսնել, ընդունել եւ ընկալել սխալդ, ապա հաջորդ անգամ դա չես կրկնի: Դեմագոգիային կողմնակից չեմ, եւ հետագայում պատրաստ եմ բոլորի հետ համագործակցության հիմքեր ստեղծել:

– Մոտակա օրերին կնշենք մեր անկախ պետականության վերականգնման 25-ամյակը: Ո՞րն է մեր ամենամեծ ձեռքբերումն այդ տարիների ընթացքում:

– Անկախ պետականության կերտման ճանապարհին չափազանց կարեւորել եւ կարեւորում եմ հայկական բանակի ձեւավորումը, հայոց ցեղասպանության հարցը համաշխարհային մակարդակի հասցնելը եւ այն ձեռքբերումները, որ ունենք ժողովրդավարության առումով: Ցավում եմ, որ բավականին շատ հայորդիներ բռնել են արտագաղթի ճամփան. սա վտանգավոր երեւույթ է, եւ ցավ եմ համարում: Պետք է ամեն ինչ անենք արտագաղթի դեմն առնելու համար, այլապես երկրի ներսում լուրջ ցնցումներն անխուսափելի կլինեն: Բազում թերություններով հանդերձ՝ ամենակարեւորն այն է, որ ունենք անկախ պետականություն եւ այդ երկրի քաղաքացին լինելով՝ տեր պիտի կանգնենք մեր՝ այդքան դժվարությամբ ձեռք բերած անկախությանը:

– Պաշտոնավարման չորս տարվա ընթացքում՝ 2008-12թթ., բավականին աշխուժացավ քաղաքի մշակութային կյանքը, հատկապես համաքաղաքային եւ համապետական տոներն առանձնակի շուքով էին նշվում: Պաշտոնաթողությունից հետո էլ շարունակեցիք ուշադրության կենտրոնում պահել այդ ոլորտը՝ մասնավորապես հովանավորելով կապանյան ծագումով կաթողիկոս Մովսես Տաթեւացուն (Խոտանանցուն) նվիրված՝ «Այունյաց երկիր» թերթի հատուկ համարի լույսընծայումը: Ընտրվելու դեպքում քաղաքի հոգեւոր-մշակութային, մարզական կյանքի ավանդույթները վերականգնելու մտադրություն ունե՞ք:

– Ինչքան պետության խնդիրներն ավելանում են, բնականաբար, այնքան մարդիկ հոգսաշատ են դառնում: Եվ առօրյա հոգսերը ժամանակավորապես մոռանալու լավագույն տարբերակը մշակութային, մարզական կյանքի աշխուժացումն է: Մեր քաղաքին նմանատիպ միջոցառումներ շատ են անհրաժեշտ, եւ եթե նախկինում մեծ շուքով ենք դրանք նշել, ապա միակ նպատակը մարդկանց լիցքաթափելն էր, դրական հույզեր պարգեւելը: Համայնքի ղեկավար ընտրվելու դեպքում, անշուշտ, կստեղծվեն բոլոր հնարավոր պայմանները մշակութային, մարզական կյանքի աշխուժացման, ազատ ժամանցի եւ հանգստի արդյունավետ կազմակերպման համար:

– Քաղաքաշինության ոլորտի մասնագետ չենք, բայց տեսանելի է, որ հատկապես վերջին տարիներին Կապանի քաղաքաշինական դեմքում լուրջ աղավաղումներ են տեղի ունենում: Եվ, կարելի է ասել, մարզկենտրոնի քաղաքաշինական դեմքի անաղարտությունը պահպանելը եւս մտահոգիչ խնդիր է:

– Դժբախտաբար, շատ արժեքներ այդ բնագավառում անդառնալի կորցրել ենք: Ժամանակին տեղի են ունեցել հողհատկացումներ, սեփականաշնորհումներ, եւ մարդիկ այնտեղ կառուցել են շինություններ: Բայց գոնե մնացած մասը պահելու, քաղաքաշինական դեմքի՝ վաղուց սկիզբ առած աղավաղման գործընթացը կասեցնելու քայլեր կձեռնարկենք: Եթե պետությունն ուժեղ լինի, համայնքը՝ վճարունակ, ապա կարելի է ժամանակին կառուցված շատ շինությունների դիմաց մարդուն փոխհատուցում տալ եւ պահանջել այն քանդել, բայց…

– Անմիջապես քաղաքի մուտքում գտնվող գերեզմանատունն այնքան է մեծացել, որ արդեն ճանապարհի հարեւանությամբ են թաղումներ կատարում, ինչը, հավատացեք, արտառոցության տպավորություն է թողնում: Հնարավոր չէ՞ արդյոք նոր գերեզմանատան համար հողհատկացում կատարել կամ գործող գերեզմանոցում մշտական աշխատող պահել՝ տարածքի վերահսկման համար. չէ՞ որ հաճախ անասունները վնաս են հասցնում գերեզմանաքարերին, նոր շիրմաթմբերին…

– Նախկինում այդ հարցը մի քանի անգամ բարձրացրել եմ, երբ դեռ գերեզմանոցն այդքան չէր ծավալվել, Աժ-ի դաշնակցական պատգամավորների հետ նույնպես խորհրդակցել եմ հարցի շուրջ: Իմ կարծիքով՝ անպայման պետք է կատարել նոր հողհատկացում… Նմանատիպ խնդիր հանրապետության այլ բնակավայրերում էլ կա, ուստիեւ ժամանակն է, որ խնդիրը կարգավորվի օրենքի ուժով:

– Դուք նշեցիք, որ դեմ եք համայնքների խոշորացմանը, բայց չմոռանանք, որ ներկայիս Կապանը նույնպես խոշորացված համայնք է. նրան են միավորվել հարակից մի շարք գյուղեր՝ Վաչագան, Կավարտ, Արփիկ եւ այլն: Բայց անցած տարիներին, կարծեք, համայնքի համաչափ զարգացման խնդիրը մոռացվել է: Թաղամասերում շարունակվում են օրակարգային մնալ ներհամայնքային ճանապարհների, այլ ենթակառույցների նորոգման եւ ուրիշ խնդիրներ: Ձեր ծրագրում ներառե՞լ եք համաչափ զարգացման խնդիրը:

– Իմ պաշտոնավարման ժամանակ Կավարտի ճանապարհի նորոգման համար շատ պայքարեցի, ի վերջո որոշակի աշխատանք կատարվեց, բայց գումարը բավարար չլինելու պատճառով աշխատանքները չշարունակվեցին: Առհասարակ համայնքային բյուջեով հնարավոր չէ ճանապարհների նորոգման աշխատանքներ, լուրջ ծրագրեր իրականացնել: Սա նաեւ մարզային իշխանությունների միջամտություն, հանքարդյունաբերական ընկերությունների ներդրում, ինչ-որ առումով նաեւ խնդիրն ըստ պատշաճի ներկայացնել է պահանջում: Իսկ քաղաքի բոլոր թաղամասերի համաչափ զարգացումն իրոք որ օրակարգային է:

– Հայաստանում ընտրությունների ընթացքում վարչական ռեսուրսը գործո՞ն համարո՞ւմ եք, թե՞ չէ:

– Վարչական ռեսուրսը գործոն համարում եմ, ձայների առնվազն 20 տոկոսը վերցնում են այդ ճանապարհով: Բայց մի բան էլ կարող եմ նշել՝ Կապանում, հատկապես վերջին շրջանում անցկացված ընտրությունների ժամանակ, ակնհայտ դարձավ, որ ոչ մի լծակ չի կարող ազդել կապանցու վրա, այդ թվում՝ վարչական լծակը: Ազատ կամարտահայտմամբ ընտրությունները Կապանում արդեն իրականություն կարելի է համարել: Ուժեղ մտավորական խավ կա մեր քաղաքում, որ հանրապետությունում չի զիջում ոչ մի քաղաքի: Երաշխիք է նաեւ այն, որ տնտեսվարող սուբյեկտները մեծ ազդեցություն չեն թողնի ընտրությունների վրա, որովհետեւ ինչ-որ տեղ գիտակցում են նաեւ, որ այստեղ գործ ունեն սկզբունքային, վճռական մարդկանց հետ:

– Պարո՛ն Աբայան, Կապանի նման քաղաքի համար պատվաբեր չէ մաքրման կայան չունենալը: Տեղյակ ենք, որ դրա համար լուրջ ֆինանսական միջոցներ են հարկավոր, բայց գիտենք նաեւ, որ մաքրման կայանի եւ աղբավայրերի հետ կապված ծրագրեր են եղել ու կան:

– Քաղաքապետ աշխատելուս տարիներին աղբի մշակման հարցերով հանդիպել եմ տարբեր միջազգային ընկերությունների ներկայացուցիչների հետ, բայց աղբի այն քանակը, որ իրենք էին պահանջում մշակման համար, չկար: Արդյունքում սա այդ ընկերությունների համար ոչ շահութաբեր բիզնես էր: Եվ հիմա աղբավայրերի խնդրի լուծման հետ կապված ուղիները համայնքապետարանը պետք է գտնի:

Նախկինում քաղաքում գործում էր կազմակերպություն, որ, քաղաքապետարանի հետ կնքված պայմանագրի համաձայն, զբաղվում էր ճանապարհների մաքրման հարցերով, ինչի համար համապատասխան տեխնիկա էր ձեռք բերել եւ պրոֆեսիոնալ մակարդակով կատարում էր իր աշխատանքը: Բայց իմ պաշտոնաթողությունից հետո այլեւս պայմանագիր չի կնքվել այդ ընկերության հետ, եւ մարդիկ, երաշխիքներ չունենալով, վաճառել են տեխնիկան:

– Չնայած վերջին տարիներին «Հայջրմուղկոյուղի» ՓԲ ընկերությունը քաղաքի ներքին ջրատար ցանցում բավականաչափ հիմնանորոգման աշխատանքներ է կատարել, բայց դեռեւս խնդիրներ կան:

– Սկսեմ նրանից, որ այն ժամանակ ես ամեն ինչ արեցի, որ ներքին ջրատար ցանցը չհանձնվի «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին: Կապանում դեռեւս կան թաղամասեր, որտեղ չկա շուրջօրյա ջրամատակարարում, չնայած որ համապատասխան ջրի պաշար ունենք: Ջրի ճնշման, որակի եւ մի շարք խնդիրներ դեռեւս լուծում են պահանջում: Այդ ընկերությունը պետք է երաշխավորի որակյալ եւ կայուն ջրամատակարարում:

– 2010թ. հոկտեմբերի 15-ին տեղի ունեցավ Կապանում բնակելի բազմաբնակարան շենք կառուցելու հիմնարկեք, որին մասնակցեց նաեւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: Բայց, ինչպես ժամանակը ցույց տվեց, այն իրականություն չդարձավ, իսկ մարդիկ այդպես էլ չհասկացան աշխատանքների կասեցման պատճառները:

– Կապանի արհեստական լճի տարածքում բազմաբնակարան շենք կառուցելու ծրագիրը բավականին մեծ ոգեւորություն էր առաջացրել երիտասարդության շրջանում, բայց անհասկանալի պատճառներով աշխատանքները կասեցվեցին, եւ դրա մասին ոչ ոք չի խոսում մինչեւ հիմա: Այնտեղ բավականին լավ հանգստյան գոտի կար, որ կարելի էր վերականգնել, բայց առաջնայնությունը տրվեց երիտասարդների համար բնակարան կառուցելու ծրագրին, որ շատ ավելի կարեւոր էր: Լավ կլիներ, որ մարդիկ պատկան մարմիններից ստանային հստակ պատասխան այդ գրավիչ ծրագիրն իրականություն չդառնալու պատճառների վերաբերյալ, ինչպես եւ տարածքում նախկին իրավիճակը վերականգնելու ծրագրերի մասին:

– Ձեր խոսքն ընտրողներին:

– Նախեւառաջ շնորհակալություն իմ ընտրողներին, որ այս տարիներին ինձ չեն մոռացել, եւ նրանց աջակցության շունչը մշտապես զգացել եմ: Ընտրողը չի ամաչի, եթե հոկտեմբերի 2-ին իր քվեն վերստին տա ինձ: Կանեմ ամեն հնարավորը, որ կապանցին իր հայրենի քաղաքում իրեն լավ զգա, համայնքապետին եւ համայնքապետարանն իրենը համարի:

Զրույցը՝
ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

Նրա գործերից մեկը. երախտիքի տուրք կապանցի մեծերին

Մովսես Խոտանանցի (Տաթեւացի), Ամենայն հայոց 101-րդ կաթողիկոս, հայոց ազգային-եկեղեցական վերջին սուրբը (2015թ.)

Արամ Մանուկյանի կիսանդրին՝ քաղաքի կենտրոնում (2009թ.)

Մանկապատանեկան մարզադպրոցը՝ Դավիթ Համբարձումյանի անվամբ (2009թ.)



Կանգնեցվեց Սարգիս Վարդանյանի հուշարձանը (2012թ.)

Նշվեց Ռաֆիկ Մինասյանի 85-ամյակը (2011թ.)

Նշվեց Սմբատ Մելիք-Սրբեփանյանի 130-ամյակը (2009թ.)

Ա.Աթայանի կերտարը ժամանակում

Արտուր Աթայանը սիրելի մոր՝ տիկին Հասմիկի հետ

Կապանցու՝ մեր ուզած տեսակը

ԳԱՅԱՆԵ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Ինչպես յուրաքանչյուր մարդ ու անհատ, այնպես էլ նա, գալիս է մանկությունից: Իսկ այն պարզ, հասարակ ու մաքուր էր: Արտուր Աթայան անձ-անհատի ձեւավորումը խարսխվեց իմաստուն տատի եւ բարի ու ազնիվ մոր դաստիարակության վրա: Դրան ավելացան հայ եւ համաշխարհային գրականության մեծերի գործերը, որոնք նա կարդում էր սկսած դպրոցական վաղ տարիներից: Բալզակի, Հյուգոյի, Ռեմարկի, Ռաֆֆու, Մաթեւոսյանի եւ այլ հսկաների կերտած կերպարները նրան սովորեցնում էին ուժեղ լինել, հաղթահարել դժվարությունները, բացել սեփական կածանը եւ շարժվել այդ կածանով՝ ազնիվ ու արժանապատիվ կերպ:

Ժամանակն ու կյանքն առաջ էին գնում, եւ հասարակ երիտասարդի հոգում նոր արժեքներ էին ձեւավորվում. հայրենասիրություն, հպարտություն ազգային ու բարոյական բարձր արժեքների նկատմամբ:

Ոչինչ պատահական չի լինում. բնատուր խելքը, քաղաքական հասունությունը, Արցախյան ազգային-ազատագրական պայքարի վերելքը նրան բերեցին հայ ազգային-քաղաքական կուսակցության՝ ՀՅԴ-ին անդամակցություն, որի ամենահին ու ամենաակտիվ անդամներից է նա այսօր Կապանում:

Աթայանի քաղաքական հասունությունը բերեց հաջորդ քայլին. 2008թ. առաջադրվեց Կապանի քաղաքապետի թեկնածու: Չեմ ուզում անդրադառնալ այդ ընտրություններին: Շատ բան արդեն գիտենք, բայց մի բան ակնհայտ էր. չլինեին գործարարի ու տնտեսական ղեկավարի բարձր որակները, Արտուր Աթայանի կայացած լինելը, մարդկային ու բարոյական լավագույն արժանիքներն ու անսահման բարությունը, տիեզերական եւ ոչ մի ուժի միջամտություն նրան չէր կարող դարձնել քաղաքապետ: Կապանցիները դա գնահատեցին ու ընտրեցին իրենց նոր քաղաքապետին՝ լավագույն ակնկալիքներով:

Նոր քաղաքապետի ընտրությունը համընկավ տնտեսական ճգնաժամի սկզբնական շրջանին, դժվարությունները շատ էին, նախկինից էլ ստացած ժառանգությունը… Չէ՛, չէ՛, նա այդ մասին չի սիրում խոսել, պարզապես չի ուզում օգտագործել այն իր օգտին:

Առաջին քայլը, որ ձեռնարկեց, քաղաքում լարվածության մթնոլորտի (իսկ այն իրոք շիկացած էր) թուլացումն էր: Աթայան-մարդու հանդուրժողականության, դիմացինին ընդառաջ գնալու, մարդկանց լսելու, նրանց օգնության կանչելու, քաղաքական կուլտուրայի եւ այլ հատկանիշների շնորհիվ կարճ ժամանակում վերացավ լարվածությունն իշխանավորների, աշխատակիցների, հասարակ քաղաքացիների միջեւ:

Բնական է, յուրաքանչյուր իշխանափոխություն իր հետ բերում է նոր փոփոխություններ, որոնցից դժգոհություններ նույնպես լինում են: Մեկի անձնական հավակնությունները բավարարում չգտան, մյուսն իրեն չգնահատված համարեց, երրորդը կարծեց, որ ինքն անփոխարինելի է, մեկ ուրիշին էլ պատեց իր՝ վաղուց գնացած գնացքի խրոխտ շչակի կարոտախտը: Աթայան մարդու քաղաքական համարձակությունը, պատասխանատվությունն այնքան հասուն էին, որ գնաց համարձակ ու անսպասելի քայլի. պաշտոնանկ արեց քաղաքապետարանի բարձրաստիճան պաշտոնյային՝ ունենալով հիմնավոր ու անհանգստացնող պատճառներ: Դա արեց կոռեկտ, առանց մատնանշելու եւ հրապարակելու իրական պատճառները (իսկ գո՞ւցե անհրաժեշտ էր դա ժամանակին անել):

Աշխատանքային գործունեության ընթացքում կապանցիները բազմիցս ականատես եղան նրա համարձակ դիրքորոշմանը: Կառավարության արտագնա նիստերում, խորհրդակցություններում, բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպումների ժամանակ համարձակորեն վեր էր բարձրացնում քաղաքի հիմնախնդիրները, հետեւողական լինում շատ հարցերի լուծման հարցում, պահանջատիրոջ դիրքերից ներկայացնում կապանցիներին հուզող հարցերը: Հարյուրավոր կապանցիներ ընդունելության են եղել նրա մոտ: Համբերատար լսել է բոլորին, ինչպես կարողացել է՝ ընդառաջել ու օգնել է, ընթացք տվել շատ պահանջների: Տխրել է, երբ չի կարողացել որեւէ բանով մեկին զորավիգ լինել: Առավել տխրել է, երբ դիմացինը չի հասկացել…

Նրա քաղաքացիական նախաձեռնությամբ սկսվեց Կապանի հիվանդանոցի վերանորոգումը: Աթայանը մեծ խանդավառությամբ իր շուրջը համախմբեց Կապանն ու կապանցուն սիրող գործարարներին, համոզեց ձեռնարկի արդյունավետության մեջ: Համաձայնեք, սեփական միջոցներով մարզկենտրոնի հիվանդանոցի վերանորոգումն իրականացնել շատերը չէին կատարի՝ ունենալով ավելի մեծ հնարավորություններ: Կային մարդիկ, որ համոզում էին քաղաքապետին գլխացավանքի մեջ չընկնել, առավել եւս, որ հիվանդանոցի նորոգումը ՏԻՄ մարմնի գործառույթներից չէ: Սակայն Աթայան-կապանցին համոզված է, որ իր համաքաղաքացիները՝ այն էլ բժշկական ծառայության կարիք ունեցող, արժանի են վերանորոգված ու կահավորված հիվանդասենյակներում բուժվելու:

Քաղաքապետի գործունեությունն ակնհայտ դարձրեց նրա ներկայանալի լինելը. պատշաճ պահվածք, դիվանագիտական մոտեցում, ղեկավարին բնորոշ արժանապատիվ կեցվածք օտարերկրյա դեսպանների, միջազգային կազմակերպությունների, սպորտի, մշակույթի, գիտության ոլորտի ներկայացուցիչների հետ հանդիպումներում, արտասահմանյան այցելությունների ժամանակ:

Այդ ամենը մի իրական հիմք ունի. նրա մարդկային որակները եւ անսահման սերը քաղաքի նկատմամբ: Աշակերտական եւ ուսանողական կոլեկտիվների հետ հանդիպումներում Կապանատան նկատմամբ սերը նրա զրույցների առանցքն է: Դրան հետեւում է նաեւ պահանջը. «Հիշե՛ք, դուք պարտք ունեք ձեր քաղաքին»: Սրանք զուտ խոսքեր չեն: Դա նաեւ նրա ապրելու կերպն է ու զավակների դաստիարակության սկզբունքը: Աթայանի երկու որդին բոլոր հնարավորություններն ունեին մնալու մայրաքաղաքում կամ մեկնելու արտերկիր, սակայն ուսումն ավարտելուց հետո վերադարձան հայրենի քաղաք:

Մարդ, քաղաքացի, քաղաքապետ ու ընտանիքի հայր լինելուց զատ՝ Արտուր Աթայանն այսօր մի շատ բարձր պաշտոն էլ ունի՝ Աթայան-պապիկ: Օրվա վերջում տուն մտնելով՝ գրկում է իր հրաշք-թոռնիկներին, հայացքը հառում Խուստուփին ու երկար մտորում: Նույնիսկ այդ պահին չի ազատվում օրվա հոգսերից, ավելին՝ նախագծում է վաղվա անելիքը: Նոր օրը սկսվում է նորից Խուստուփին նայելով: Մտքում կրկնում է իմաստուն տատի աղոթքը եւ ավելացնում. **«Ես սիրում եմ իմ քաղաքը, այստեղ իմ թոռներն ու ծոռներն են ապրելու»:** ■

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանի հերթական հանդիպումը Կապանի քաղաքապետ Արտուր Աթայանի հետ (2011թ.):

2011թ. հոկտեմբերի 2-ին Շահումյան փողոցում բացվեց Խաղաղության պուրակը: ■

Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի եւ ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ Վաչե Տերտերյանի հետ «Կապանյան օրեր» ավանդական փոնակատարության ժամանակ (2011թ.):

1 սեպտեմբերի 2009թ., ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ վերաբացվում է քաղաքի N3 դպրոցը՝ հիմնանորոգված մոսկվայաբնակ կապանցի, բարերար Սերգեյ Համբարձումյանի կողմից:

Ա.Աթայանի նախընտրական շտաբի հայտարարությունը

Արփուր Աթայանի ընտրությունը բխում է Կապանի շահերից

Հոկտեմբերի 2-ին կայանալիք ՏԻՄ ընտրությունները եւ մասնավորապես Կապան համայնքի ղեկավարի ընտրությունը համայնքում առաջացրել են նոր իրավիճակ, որին ավելի շատ բնորոշ են աճող լարվածությունը, հերթական անգամ հանրությանը տրոհելու փորձերը, քաղաքական ուժերի, հասարակական շերտերի, տնտեսության ու գործադիր իշխանության մեջ ազդեցիկ դիրքեր զբաղեցնող անձանց շահերի բախումը: Եվ պատասխանատու այս հանգրվանում, երբ վճռվում է համայնքի ղեկավարի ով լինելու հարցը, երբ որոշ ուժեր ձգտում են համայնքի բնակիչներին շրջանցելով իրենց կամքը պարտադրել Կապանին, մենք չենք կարող պասիվ հայեցողի դերում լինել եւ սպասել, թե ինչ հունով կընթանան զարգացումները:

Առաջին հարցը, որի վերաբերյալ մեր դիրքորոշումը կուզենայինք բարձրաձայնել, հետեւյալն է՝ մենք անթույլատրելի ենք համարում ցանկացած միջամտություն Կապան համայնքի ղեկավարի ընտրությանը: Անցել են ժամանակները, երբ Կապանը կարող է ունենալ դրածո համայնքապետ: Համայնքի ղեկավարի ընտրությունը բացառապես համայնքի ընտրողների գործն է:

Երկրորդ. չի կարելի թույլ տալ, որ Կապանը վերադառնա անցյալին, չի կարելի կույր ձեւանալ եւ չտեսնել, որ հասարակությունն անընդհատ փոփոխվող օրգանիզմ է, որ հասարակության կառավարումն անընդհատ արդիականացում է պահանջում, եւ տասը-քսան տարիներին կիրառված մեթոդներն այլեւս պետքական չեն: Հասարակության կառավարումը նոր մոտեցումների պահանջ ունի:

Երրորդ. 2008-12թթ. Կապանի քաղաքապետ Արտուր Աթայանը ցանկություն է հայտնել կրկին ընտրվել համայնքի ղեկավարի պաշտոնում: Եվ այսօր ամենատարբեր կարծիքներ են հնչում նրա գործունեության մասին, մարդիկ քննարկում են նրա ընտրության նպատակահարմարությունը: Բոլորն էլ, անտարակույս, իրավունք ունեն եւ կարող են կարծիք հայտնել, դատողություններ անել այդ հարցերի շուրջ: Բայց, կարծում ենք, ամենքից շատ մենք գիտենք Արտուր Աթայանին, քանզի տարիներ շարունակ նրա հետ գտնվել ենք կողք կողքի ու համատեղ աշխատել, ծառայել միեւնույն գաղափարին: Անցած այդ ճանապարհը թույլ է տալիս ասել՝ Արտուր Աթայանը դժվարին ու հակասական մեր օրերում կարող է արժանավոր առաջնորդը լինել մարզկենտրոնի:

2008-12թթ. հասցրեց անել ավելին, քան խոստացել էր ընտրողին, քան նախատեսել էր համայնքի քառամյա զարգացման ծրագրում: Նա քաղաքապետարանի՝ տարիներով սասանված հեղինակությունը նոր մակարդակի բարձրացրեց: Նա մինչեւ վերջ զերծ մնաց նախապաշարումներից ու կոմպլեքսներից եւ հանուն Կապանի համագործակցեց քաղաքական բոլոր ուժերի, պետական ու հասարակական մարմինների, առանձին անհատների ու գործիչների հետ: Նա եւս մեկ անգամ ապացուցեց, որ գործի մարդ է, որ իր հող ու ջրի զինվորն է, որ պատրաստ է անմնացորդ նվիրաբերվել իր քաղաքին: Այնպես որ՝ Կապանն այսօր, ինչպես 2008 թվականին, ունի Արտուր Աթայան տեսակի ղեկավարի պահանջարկ:

Ավելին, Արտուր Աթայանի ընտրությունը բխում է Կապանի ու կապանցիների շահերից: Նա լավագույնս է պատկերացնում համայնքի առջեւ ծառացած խնդիրները եւ դրանց լուծման վերաբերյալ ունի իրատեսական ծրագրեր, որոնց լուծմանը սպասում են համայնքի բնակիչները: Նա ներկա փուլում համայնքապետարանի անկախ, ինքնուրույն, արժանապատիվ գործունեության, համայնքի հավասարակշռված ընթացքի գրավականն է:

Հավանություն տալով Արտուր Աթայանի թեկնածությանը՝ միաժամանակ կոչ ենք անում մեր ընտրողներին ու համակիրներին՝ հոկտեմբերի 2-ին քվեարկել նրա օգտին:

Մենք բոլոր թեկնածուներից ու նրանց նախընտրական շտաբներից ակնկալում ենք բացառապես քաղաքակիրթ եւ օրինավոր ընտրապայքար:

Մենք ակնկալում ենք, որ N38 ընտրատարածքային ընտրական եւ տեղամասային ընտրական հանձնաժողովներն իրենցից կախված ամեն ինչ կանեն, որ ՏԻՄ ընտրությունները հոկտեմբերի 2-ին անցնեն օրինականության, ազատության պայմաններում, որ ընտրողներն ունենան ազատ կամարտահայտության, խղճի մտոք քվեարկելու լիարժեք հնարավորություն:

Մենք կոչ ենք անում համայնքի ընտրողներին՝ ակտիվ դիրքորոշում ու մասնակցություն ունենալ համայնքի ղեկավարի ընտրությանը:

Կապան համայնքի ղեկավարի
թեկնածու Արփուր Աթայանի
նախընտրական շտաբ
14 սեպտեմբերի 2016թ.

ՖՈՏՈԼՈՒՐ

Խաղաղության պուրակն Արփուր Աթայանի նախաձեռնությամբ ստեղծված բազմաթիվ խաղահրապարակներից եւ զբոսայգիներից մեկն է

ՖՈՏՈԼՈՒՐ

ՖՈՏՈԼՈՒՐ

Նոր տեսք՝ ներհամայնքային ճանապարհներին, կամուրջներին ու անցումներին. 2008-12թթ. Կապանի քաղաքապետ Ա.Աթայանի իրականացրած ծրագրերից էր դա

ՖՈՏՈԼՈՒՐ

ՖՈՏՈԼՈՒՐ

2011թ. հոկտեմբերի 2: Արփուր Աթայանի քաղաքապետության օրոք առանձնահատուկ շուքով նշվեց Կապանի տոնը: Տոնակատարությանը հատուկ երանգ հաղորդեց Կապան հրավիրված վաստակավոր կոլեկտիվ պարի պետական անսամբլը (գլխավոր բալետմայստեր՝ ՀՀ վաստակավոր արտիստ Ասատուր Կարապետյան, գեղարվեստական մասի ղեկավար՝ Հայկ Գրիգորյան, տնօրեն՝ Էրիկ Չանչուրյան): Անսամբլը հիանալի պահեր պարգեւեց հանդիսականին՝ հավաստելով, որ մեր նշանավոր պարողներին փոխարինելու է եկել շնորհալի մի սերունդ:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ Փ. ՍԱՐԳՍՅԱՆԻ

Աշխարհայեցողություն

Աշխարհին Արտուր Աթայանի պատուհանից

Հատվածներ «Դժվար է քաղաքականության մեջ դեմք պահելը… » վերտառությամբ ակնարկից՝ նվիրված Արտուր Աթայանի ծննդյան 50-ամյակին

Ցանածը հնձելու ժամանակը

Կյանքի 50 տարին բոլորած տղամարդը պետք է արդեն արած լինի հնարավոր ամենը, որպեսզի գա վայելելու ժամանակը: Այս տարիքում պիտի հավաքես ցանածդ սերմի բերքն ու պարզապես վայելես աշխատանքիդ արդյունքները, վայելես հաջողություններդ, ընտանիքդ՝ լցված զավակներիդ ու թոռներիդ ջերմությամբ:

Մուտք քաղաքականություն

Կուսակցական գործոնը քաղաքապետության օրոք ինձ համար էական չի եղել, որովհետեւ բոլորի քաղաքապետն եմ եղել անկախ ամեն ինչից, եւ մյուս կողմից, կարծում եմ՝ իմ կուսակցական ընկերներն էլ չեն կարող ասել, թե իմ գործունեությամբ վնաս եմ հասցրել ՀՅԴ վարկին: «Նժույգից իջնելուց» հետո ընկերներիս ու բարեկամներիս շարքերը չեն նոսրացել, դժվար ժամանակներում լքողներ չեն եղել, ու ես այդ առումով ինձ այսօր ոչ միայն մենակ չեմ զգում, այլեւ փողոցով քայլելիս ու զանգվածային միջոցառումներում ինչ-որ տեղ ավելորդ ուշադրություն եմ զգում…

Քաղած դասերը

Շատ դժվար է քաղաքականության մեջ դեմք պահելը, պիտի կարողանաս բոլոր իրավիճակներում քեզ ճիշտ դրսեւորել, երբեմն իրավիճակն ինքն այնպիսի բաներ է պարտադրում, պիտի ճկուն լինես:

Եթե քաղաքում շրջելիս մի տեղ աղբ էի տեսնում, վատ էի զգում, եթե պիտի ձյուն գար, ողջ գիշեր չէի քնում… Նախկինում պատասխանատվություն կար միայն իմ ղեկավարած կոլեկտիվի համար, իսկ այդ ժամանակ՝ 45 հազարանոց քաղաքի բնակչության՝ բազում խնդիրներով: Հաճախ էլ խնդիրները լսում, բայց լուծել չես կարող եւ պիտի մարդուն այնպես պատասխանես ու ճանապարհես, որ թեւաթափ չլինի:

Նորմալ եմ վերաբերվել քննադատություններին, ձգտել դասեր քաղել: Եթե տեսել եմ, որ անհեթեթություն է, չեմ անդրադարձել կամ պատասխանել, եթե ասեկոսեներ են եղել, ձգտել եմ ինչ-որ ձեւով՝ արած-չարածի հաշվետվությամբ ցրել դրանք, մարդկանց ցույց տալ իրականությունը: Դա այնպիսի պաշտոն է, որ եթե այդպիսին չլինես, շատ արագ կարող ես կտրվել ժողովրդից, իրականությունից: Բնական է՝ չես կարող բոլոր հարցերը լուծել, եւ քանի դեռ հիմնախնդիր կա, մարդիկ դժգոհ կլինեն ու կքննադատեն:

ՏԻՄ-ի մասին

Պարզապես մեր համայնքներն այսօր բավականին թույլ լիազորություններ ունեն: Հզոր համայնքը հզոր պետության գրավականն է, իսկ հզորացմանը խանգարող գործոնները շատ են: Եթե թողնեն, որ համայնքն իրեն օրենքով տրված լիազորություններն օգտագործի, առավել ուժեղ համայնք կլինի, որը կկարողանա իր բնակչի խնդիրները լուծել: Իսկ այսօր համայնքն ավելի շատ խնդիրը գտնողի եւ կառավարությանը հասցնողի դերում է:

Մտքեր, մտքեր...

Հայերիս մեջ սրբություններ կան, որոնք ոտնակոխ անողը տեղ չունի իմ շրջապատում. անչափ կարեւորում եմ սերը դեպի ծնողը, կինը, երեխաները: Մեր արժեքները պիտի մեզ պահեն, քիչ ենք, 50 միլիոնանոց ազգ չենք, որ մեզ շռայլություն թույլ տանք եւ ասենք՝ մեր մեջ թող այսպիսիք էլ լինեն… Մեր տեսակը պիտի պահենք:

Կուզեի վիճակն այնպիսին լիներ, որ մարդիկ Հայաստանում գոնե հավատային, որ ասենք, տասը տարի հետո ավելի լավ է լինելու…Դրական լիցք է պետք, իսկ եթե լավատեսություն չկա, արածդ ոչ մի գործ չի կարող արդյունք տալ:

Կյանքի ամենամեծ նվաճումը

Կյանքիս ամենամեծ նվաճումը զավակներս են…

Մինչեւ վերջ կմնամ Կապանում, ներկա բացասական իրողությունները դրսում ապրելու ցանկության չեն մղում, ավելի լավ է մնաս եւ պայքարես դրանց դեմ: Ես ինձ միմիայն Կապանում եմ լավ զգում:

10 ապրիլի 2014թ.

Սյունյաց երկիր
Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի): «ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:
® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1720, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 14.09.2016թ.:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ: